

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 14-ին ժամը 14:00-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը: Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստը վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանը:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

Զեկ.՝ Հ.Միքայելյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին

Զեկ.՝ Մ.Կոստանյան

3. Արթուր Սեմյոնի Բայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկ.՝ Հ.Միքայելյան

4. Աննա Բարիսի Բարսեղյանին և Ռոման Հունիսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկ.՝ Հ.Միքայելյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին

Զեկ.՝ Մ.Կոստանյան

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 65-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Զեկ.՝ Մ.Կոստանյան

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 99 -Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Զեկ.՝ Մ.Կոստանյան

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին

Զեկ.՝ Մ.Կոստանյան

9 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Ձեկ.՝ Ք.Մելքոնյան

10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի ենթակայության բյուջետային հիմնարկի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Ձեկ.՝ Ք.Մելքոնյան

11. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել

Ձեկ.՝ Դ.Մինասյան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

1. **Օրակարգի 1-ին հարցը** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Միքայելյանը , առաջարկեց տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թափրով գյուղում Իսմաիլ Հակկի Շեկին սեփականության իրավունքով պատկանող՝ Կ. Դեմիրճյան թաղամասի 2-րդ փողոց թիվ 2 հասցեում գտնվող, 04-094-0159-0012 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0.0618 հա մակերեսով հողամասին կից Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թափրով գյուղի Կ. Դեմիրճյան թաղամասի 2-րդ փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող, 04-094-0159-0051 կադաստրային ծածկագրով բնակավայրերի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0102 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով, օտարելու Իսմաիլ Հակկի Շեկին:

Վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց իրավաբանական բաժնի պետ Մելանյա Կոստանյանը,

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 27122022-04-0047, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Գ. Լուսավորչի փողոց 2/1 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, 04-094-0135-0001 կադաստրային ծածկագրով, 0.02357 հա մակերեսով /235.74 քառակուսի մետր/ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, երկհարկանի բնակելի տուն կառուցելու նպատակով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 8 003 373 /ութ միլիոն երեք հազար երեք հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ:

Քննարկվող նախագծի վերաբերյալ այլ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

3. **Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝** Արթուր Սեմյոնի Բալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Միքայելյանը, նշեց, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ կետով, հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 26-ին տրված N 19 ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և հողամասի սեփականատեր՝ Արթուր Սեմյոնի Բալյանի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի դիմումը՝ **առաջարկվում է.**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղում գտնվող՝ Արթուր Սեմյոնի Բալյանին սեփականության իրավունքով պատկանող 04-026-0062-0015 կադաստրային ծածկագրով 0,10866 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,10866 հա մակերեսով հողամասի՝ վարելահող, նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ սառնարանային տնտեսություն կառուցելու համար:

Հանձնարարել համայնքի ղեկավարին կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ Աննա Բարիսի Բարսեղյանին և Ռոման Հունիսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Հակոբ Միքայելյանը, նշեց, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ կետով, հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 26-ին տրված N 20 ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և հողամասի համասեփականատերեր՝ Աննա Բարիսի Բարսեղյանի և Ռոման Հունիսի Վարդանյանի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի դիմումը՝ **առաջարկվում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող՝ Աննա Բարիսի Բարսեղյանին և Ռոման Հունիսի Վարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 04-009-0137-0053 կադաստրային ծածկագրով 0,11 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,11 հա մակերեսով հողամասի՝ կորիզավոր, նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմատուն կառուցելու համար:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց Մելանյա Կոստանյանը, նշեց, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով **նախատեսվում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 16122022-04-0081, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-074-0123-0244 կադաստրային ծածկագրով, 0.3465 հա մակերեսով վարելահող գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով:

2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 5 000 000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 65-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց Մելանյա Կոստանյան, նշեց, որ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է. **նախատեսվում է վերացնել որոշման մեջ առկա տեխնիկական վրիպակը, անհրաժեշտ է՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 65-Ա որոշման մեջ և կից հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում ««Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մշակույթի և երիտասարդության պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը կարդալ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մշակույթի և երիտասարդության պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն»:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 7-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 99 -Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Մելանյա Կոստանյանը

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **առաջարկվում է՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 26-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» թիվ 99-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

Որոշման 2-րդ մասում «6 000 000 (վեց միլիոն)» թիվը փոխարինել «5 000 000 (հինգ միլիոն) » թվով:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության, հարցեր չեղան զեկուցողին
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 8-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Մելանյա Կոստանյանը, նշեց, որ ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ **առաջարկվում է.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 16122022-04-0086, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-030-0194-0007 կադաստրային ծածկագրով, 0.1181 հա մակերեսով վարելահող գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 350 000 / երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 9-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Քնարիկ Մելքոնյանը, առաջարկեց ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով առաջարկեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Առաջարկել Փարաքար համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի
կառուցվածքային ստորաբաժանումներ են**

1. Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
3. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, արտաքին կապերի, տուրիզմի բաժին
4. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
5. Իրավաբանական բաժին
6. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱՇԱՆՈՒՄՆԵՐ

1. Աշխատակազմ /կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ/
2. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ
3. Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 10-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի ենթակայության բյուջետային հիմնարկի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Քնարիկ Մելքոնյանը, նշեց, որ Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, առաջարկվում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի ենթակայության բյուջետային հիմնարկի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1-18 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 1-ից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 11-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց Դավիթ Մինասյանը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով առաջրկվում է .

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել 2023 թվականի մարտի 14-ը, ժամը 17:00-ին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո ավագանու նիստը հայտարարվեց փակված: